

որ պատահեցան ի Կ. Պոլիս, եւ մանաւանդ Ջուզայեցիք եւ Գողթնացիք, զի գիտէին թէ Մովսէսն յարեւելեան աշխարհէն է. ամենեքեան մատուցեալ առ Գրիգոր վարդապետն խնդրէին տալ տէր Մովսէսի վարդապետութիւն» : Զիջելով եղած խնդրանքին եւ «տեսանելով զքաղցր եւ զսրբասէր բարս եւ զպարկեշտ վարս տէր Մովսէսի, նաեւ զվկայութիւն ժողովրդեանն» յանձն առաւ Գրիգոր Կեսարացի տալ անոր վարդապետական դաւադանը «մեծ հանդիսիւ» (Դաւր. 286—287) :

Գաւազանի տուչութիւնը տեղի ունեցաւ առանց տարակուսի 1612ին : Յաջորդ տարին դահլնկէց եղաւ Կեսարացին պատրիարքական աթոռէն եւ քաչուեցաւ Կեսարիա : Իսկ Մովսէս անմիջապէս ճանապարհ ինկաւ դէպի Երուսաղէմ :

Այս ժամանակադուրութեան կը հակասեն Առ. Դաւրիժեցւոյ տեղեկութիւնները, որոնց համաձայն «այնուհետեւ տէր Մովսէս վարդապետն անխափան քարոզէր յամենայն եկեղեցիս զաւետարանն Քրիստոսի վճիտ եւ պայծառ քարոզութեամբ : Եւ յետ ամաց ինչ՝ հրամանաւ Գրիգոր վարդապետին առաքեալ եղեւ Մովսէս վարդապետ զնալ եւ ինքնագլուխ քարոզութեամբ շրջագայիլ. եւ ելեալ ի Կ. Պոլսէ եկեալ հասեալ ի քաղաքն Տիգրանակերտ, ուր էր տապանն Սրապիոն վարդապետին, համբուրեալ զնա սրբով տապանաւն, եւ առեալ ի նմանէ զօրհնութիւն՝ ելեալ անտի